*ներկայությունը Հայաստանում և մտերմությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, տեսել ենք Ձեր հոգում առկա սերը Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ*»,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը: Ի դեմս դեսպանի, փոխանցելով Ֆրանսիայի իշխանություններին ու ժողովրդին հայ ժողովրդի խորը երախտագիտությունը, Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ այն աջակցությանն ու զորակցությանը, որ Ֆրանսիան մշտապես ցուցաբերել է հայ ժողովրդին տարբեր ոլորտներում:

Իր տպավորությունները Հայաստանում ծառայության շրջանի մասին ներկայացրեց նաև պրն Կյունին: «Հայաստանը պատմական վկայությունների երկիր է: ... Այն անսպառ հարստությունների տեր երկիր է»,- իր խոսքում նշեց դեսպանը:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, շնորհակալություն հայտնելով դեսպանին մատուցած ծառայությունների համար, նրան հաջողություն մաղթեց իր հետագա աշխատանքում:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 17-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստան-Ռուսաստան միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովի պատվիրակությանը՝ գլխավորությամբ հանձնաժողովի համանախագահ ՌԴ Դաշնային Խորհրդի անդամ Նիկոլայ Ռիժկովի:

«*Ուրախալի է տեսնել, որ հարաբերությունները երկու երկների միջև շարունակում են զարգանալ, և աշխատանք է տարվում դարերով ձևավորված այդ բարի ավանդույթները պահպանելու ու զորացնելու համար*»,- ասաց Նորին Սրբությունը՝ ողջունելով հյուրերի այցը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ տիար Ռիժկովը Նորին Սրբությանը ներկայացրեց Հայաստան-Ռուսաստան միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովի աշխատանքները և կարևորեց Ռուսաստան-Հայաստան համագործակցության հարաբերությունների հետագա սերտացումն ու ամրապնդումը:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը մտահոգություն հայտնեց նաև Ռուսաստանում հայերի նկատմամբ տեղ գտած որոշ երևույթների առնչությամբ: «*Մենք վստահ ենք, որ դուք, ճանաչելով մեր ժողովրդին, նրա ոգին, հաղորդ լինելով դեպի Ռուսաստանը և ռուս ժողովուրդը մեր ժողովրդի բարի զգացումներին, պիտի գործադրեք ձեր ջանքերը, որպեսզի այս մտահոգությունները վերանան մեր ժողովրդի հոգուց*», - նշեց Հայոց Հայրապետը՝ գնահատելով նաև տիար Ռիժկովի ջանքերն այս հարցում:

Մասնավորաբար անդրադառնալով հայերի նկատմամբ Ռուսաստանում վերջին շրջանին դրսևորվող երևույթներին՝ նա նշեց. «Մենք արմենոֆոբիա չունենք և չենք էլ կարող ունենալ. հայ համայնքը շատ ամուր է ինտեգրված մեր կյանքին: Հայկական Սփյուռքը տարածված է երկրով մեկ, և մենք միասին, կողք կողքի ենք ապրում»,- ասաց Ն. Ռիժկովը՝ վստահեցնելով, որ ամեն ինչ պիտի անեն, որ երբեք այդ երևույթ-

ները չկրկնվեն:

Հանդիպմանն անդրադարձ եղավ նաև Հայաստանյայց Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջև առկա ջերմ հարաբերություններին և գործակցությանը:

Վերջում Նորին Սրբությունը մաղթեց, որ Տիրոջ օրհնությամբ սերը, հարգանքը և եղբայրությունն առավել ամրապնդվեն երկու դարավոր բարեկամ ժողովուրդների միջև:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՏԱԼԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԻՆ

Հոկտեմբերի 18-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իտալիայի Արտաքին գործերի փոխնախարար Ֆամիանո Կրուչիանելլիին՝ ՀՀ-ում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Մարկո Կլեմենտեի ուղեկցությամբ:

Ողջունելով հյուրին՝ Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ երկու երկրների միջև հարաբերությունները շարունակաբար զարգանում և ամրապնդվում են: Վեհափառ Հայրապետը հանուն հայ ժողովրդի շնորհակալություն հայտնեց Իտալիայի իշխանություններին և ժողովրդին այն զորակցության համար, որ ցուցաբերվում է տարածաշրջանում խաղաղությունն ամրապնդելու գործում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկայացրեց նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Վատիկանի միջև առկա հարաբերությունները և սերտ համագործակցությունը, ինչի շնորհիվ չորս երիտասարդ միաբաններ ներկայիս ուսանում են Կաթոլիկ Եկեղեցու տարբեր կրթական հաստատություններում:

Հանդիպման ընթացքում նաև անդրադարձ եղավ ժողովրդի սոցիալական վիճակին, Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը և Թուրքիայի հետ Հայաստանի Հանրապետության հարաբերություններին:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՉԻՆԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԻՆ

Հոկտեմբերի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Ժողովրդական ներկայացուցիչների համաչինական մշտական ժողովի փոխնախագահ Սյու Ցզյալուի գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ-ում ՉԺՀ դեսպան Ցզո Սյուելյանի ուղեկցությամբ:

Հանդիպմանը Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց Հայաստանի և Չինաստանի միջև տարեցտարի ամրացող և սերտացող հարաբերությունների համար՝ նկատելով, որ դրանց արմատները ձգվում են մինչև վաղ միջնադար: Վեհափառը վստահություն հայտնեց, որ այդ հարաբերությունների զորացումը երկուստեք շահեկան է լինելու: